ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **12/ՀՈՒՆԻՍԻ/ 2024Թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027ԹԹ «ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ» ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

Սույն թվականի հունիսի 12-ին, ժամը 15:00-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանում կայացավ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2025 -2027թթ. «Միջնաժամկետ ծախսերի ծրագրի» նախագծի վերաբերյալ հանրային քննարկումը:

Մասնակցում էին՝

Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Սարգսյանը.

Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Աշոտ Խաչատրյանը.

Ջերմուկ համայնքի ենթակայությամբ գործող ՀՈԱԿ-ների տնօրենները, աշխատակիցները.

Ջերմուկ համայնքի ավագանու անդամներ և համայնքի բնակիչներ.

Բացման խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Սարգսյանը՝ ներկայացնելով հանրային քննարկման նպատակը:

Նախագծի վերաբերյալ հանգամանալից տեղեկատվություն ներկայացրեց Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Արմինե Ղազարյանը:Վերջինս նշեց ծրագրի՝ բավականին մեծ ու թիմային աշխատանք լինելու մասին, և որ վերջինի մշակման վրա աշխատել է ողջ աշխատակազմը, պատասխանատու կազմակերպությունների աշխատակազմերը: Ծրագիրը սկսվել է մշակվել սույն թվականի փետրվարի կեսերից և ավարտվել է մայիսի սկզբին: Նշվեց, որ ծրագիրը իր մեջ ընդգրկում է համայնքի ենթակառույցների երեք տարվա միջնաժամկետ ծախսային ծրագրերը և ենթադրում է առաջիկա երեք տարիների եկամուտների և ծախսերի կանխատեսում: Այնուհետև նշվեց, որ ֆինանսական բաժինը տարվա ընթացքում ներկայացնում է չորս ֆինանսական ծրագիր, դրանք են՝

- Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր, որը հաստատվում է մեկ անգամ հինգ տարին մեկ ժամանակահատվածում՝ համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց անմիջապես հետո:

- Միջնաժամկետ ծախսերի ծրագիր՝ որը մշակվում է ամեն տարի և հաստատվում է հաջորդող երեք տարիների համար:

- Տարեկան աշխատանքային պլան՝ տվյալ բյուջետային տարվա համար:

- Ծրագրային բյուջե՝ դարձյալ ընթացիկ տարվա համար:

Հնգամյա զարգացման ծրագրում և ՏԱՊ-ում այն ծրագրերն են ներառված, որոնք իրականացվում են ինչպես պետական ու համայնքային բյուջեների հաշվին, այնպես էլ այլ կազմակերպությունների համաֆինանսավորմամբ, իսկ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և ծրագրային բյուջեն այն ծրագրերն են, որոնք իրականացվում են համայնքի և դոնոր կազմակերպությունների բյուջեների հաշվին:
Հաջորդիվ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը, սլայդի տեսքով, մանրամասն ու հանգամանալից ներկայացրեց Ջերմուկ համայնքի 2025-2027թթ. «Միջնաժամկետ ծախսերի ծրագրի» նախագիծը:

Վարող՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Արմինե Ղազարյան

Արձանագրող՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Ս. Կարապետյան